ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՅԱՆՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
23	Yans Textile	«ՅԱՆՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ	Վերնաշապիկ՝ պոլո, կարճաթև, տարբերանշաններով, կանացի (Պոլո շապիկ, ասեղնագործ, ամենօրյա, կանացի) Պոլո ձևի կարճաթև վերնաշապիկը հարմարեցված է կանացի կազմվածքին, ունի ընդգծող գոտկատեղ և սեղմոններով կրծքամաս, իր կարվածքով հարմարավետ է ակտիվ գործողությունների համար: Պոլո շապիկը բաղկացած է առաջամասից, կոկետկայով թիկունքամասից, կարճ թևքերից և ծալովի օձիքից: Շապիկի կրծքամասի վերին հատվածը կոճկվում է 3 օղակ կոճակներով, ընդ որում վերին կոճակը՝ օձիքին: Շապիկը արտադրվում է երկու տեսակի գործվածքից, ընդ որում ուսամասերը և թիկունքային հատվածը՝ մինչև կոկետկան, մշակված է մուգ կանաչ գույնի առնվազն 220գ/մ2 գործվածքից՝ բամբակ, լաիկրա և այլն, իսկ մնացած մասերը՝ 100% նեյլոն մանրաթելերի, առնվազն 180գ/մ2 գործվածքից: Գունավորումը և ձևը ըստ ներկայացվող նմուշի: Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման

			նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Թևքերի մանժետները մշակված է 2.5-2.7 սմ լայնության մանժետով, իսկ շապիկի ստորին հատվածը մշակված է 6.4-6.7 սմ լայնության մանժետով : Շապիկի ուսամասերում՝ դեպի առաջամաս աննշան թեքվածությամբ, մշակված են 4.7-4.9սմ լայնության և 15.5-16.0 սմ երկարության ախլակներ, որոնք կոճկվում են 13-14 մմ տրամագծով գլխիկավոր կոճակներով: Ախլակները պատրաստված են թիկունքի հատվածի գործվածքից: Ախլակների վրա անցկացվող պատա՝ կոչման տարբերանշաններով ուսադիրները ունեն 10.0սմ երկարություն և 5,0-5.2 սմ լայնություն, դարձերեսը հաստացված և ամրացված են սոսնձվող շերտով, հայկական առնամենտի զարդանախշերով են, ջակկարդ մեքենայի գործվածքով (ձևաչափը՝ ըստ Պատվիրատուի նմուշի), վրան նշված զինվորական կոչումներով: Թևքանշանները և կրծքանշանները պատրաստված են թիկունքի հատվածի գործվածքից, վրան մուգ կանաչ թելով ասեղնագործությամբ: Եզրերը մաքուր merrow մեքենայով եզրակարված են: Աջ կրծքին «ՀՀ ԱԱԾ» գրվածքն է, ձախ թևքի վրա՝ ուսակարից 3.0 սմ դեպի ներքև ասեղնագործված (լցակարված ապլիկացիայի մեթոդով) 9.0×7.0 սմ կողմերով, սեպաձև, ՀՀ ԱԱԾ գունավոր զինանշանը: Շապիկի ձախ կողակարի եզրին կարի տակից կարվում է պիտակ (կամ պիտակներ): Պիտակին նշվում է չափս-հասակի, տեսականու անվանման, պայմանագրի կոդի, մատակարար և արտադրող կազմակերպության անվանման, արտադրման տարեթվի և խնամքի (գրվածքներով և սիմվոլներով) վերաբերյալ տեղեկատվությունը: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ մինչև 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, պայմանագրի կոդը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО «ЯНС ХОЛДИНГ» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
23			